



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L60
1274

1999


ՄԱԿԱԿԱՆ ՎԵՊ



ՕՐ. ԳԱՐԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՍՈՀԱԿԵԱՆՑ

ՏՓԽԻԱ

Տպարան Յովհաննու Մարտիրոսեանց



1877

ՄԱԿԱՐՆ ՎԵՊԻ

180

Յանձնութեաց գույքի մասին

ՕՐ. ԴԱՐԻԱ ԳԱՍՊԱՐԱՆ ՍԱՀԱԿԵԱՆՑ

15. 4. 1877

Ս Փ Խ Ա Տ

Տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց:

1877



ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Июля 1877 г.

23 1177

41274.60.

Типографія Мартirosianца, на Орбеліановской улицѣ № 5.



Անցեալ ամառ ես Օրէնբուրգի էի: Ես ապ-
րում էի մի մեծ գերդաստանի հետ, որ սովոր էր
զեղս կեանքի և այժմ շատ տիտուր էր, ստիպուած
լինելով այդ ամառ Օրէնբուրգի կալուածքում անց-
կացնելու, որովհետեւ գերդաստանի մայրը ձիակաթ
պիտի խմէր: Ըստանիքը սաստիկ ձանձրանում էր.
Նա մինչև անդամ գրկուած էր զիւղային սովորա-
կան վայելլութիւններից, գետի վերայ նաւելուց, ձի-
արշակից և կառքերով զրօննելուց: Նրջակայքը ա-
մայի անապատ էր, ոչ լիճ կար, ոչ գետ, և ոչ գո-
նէ մի փոքրիկ արհեստական լճակ: Խիստ շող էր,
ամենաթեթև քամուց բարձրանում էին ու փոշու-
բարակ սիւներ. միանգամ օրիորդները գնացին զրօն-
նելու, բայց այնպէս շրջած վերադարձան, որ այնու-
հետեւ նոցա մայրը էլ պատշպամից ցած չէր թող-
նում նոցա: Դրացի կալուածատէրերը ուշ ուշ էին
այցելում դոցա, որովհետեւ նոքա զբաղուած էին
զիւղատանտեսական պարապմունքներով, բայց և նա-

քա շատ սակաւաթիւ էին: Մեր տանտիկինը և նորա աղջիկները ամբողջ օրը յօրանջելով ձիակաթ էին խմում, պատշգամբում իրանց տեղերում նիրհում էին և անհամբեր սպասում էին շաբաթ օրին: Այդ օրը կառք էր ուղարկում քաղաք, որով գալիս էին աստիճանաւոր հիւրեր, որոնք մինչեւ կիւրակի երեկոները ազատ էին, նոյնպէս և հարուստ վաճառականների որդիք, որոց հետ նոքա ձանձրութիւնից ստիպուելով՝ ծանօթացան: Ամենից անտանելի օրը ինձ համար կիւրակէն էր: Սկզբի կիւրակէները սկսուեցաւ աղմուկ, ծիծաղ, դատարկաքանութիւն, անմիտ զբոցները շարունակում էին առաւտից մինչեւ զիշերը: Հետեւեալ կիւրակէները փոքր ինչ հանդարտեցան, իսկ վերջինները՝ ամբողջ ընկերութիւնը պարապութիւնից շարունակ յօրանշում էր. պարեւ չէին կարող որովհետեւ խիստ շոգ էր. խօսելու բան չունեին, իմ օրիորդներս սովոր չէին ոչ կարդալու և ոչ օրինաւոր պարապմունքի. և նեղըստութիւնից հոգիները դուրս էին գալիս, երբ խնջոյք ու հանդէս չունեին:

Հիւրերի մէջ հօրիսենկօ անունով մի երիտասարդ կար, որ մի հարուստ ցորնավաճառի որդի էր: Նորա հայրը մեռաւ, թողնելով իւր որդուն երկու միլիոն փող, և ոչ մի կրթութիւն չտուեց նորան: Բօրիսենկօն հաղիւ կարգալ զիտէր. հօր կենդանութեան ժամանակ նա տակից խուզում էր մազերը, անշուք շորեր էր հագնում, չէր համարձակում առանց հօր զիտութեան ոչ մի կոպէկ ծախսել և ոչ էլ տանից ոտք դուրս դնել: Հօր մահից յետոյ նա

բերել տուեց տասներկու ձեռք նորաձեւ հագուստ, արկղներով գոյնդգոյն ձեռնոցներ, մորուքը սափրեց, մազերը գանգլեց և կարծեց, թէ արդէն դառել է մի լուսաւորեալ երիտասարդ: Նա խիստ ծաղըելի էր, և այդ չէր նկատում ինքը: Մեր օրիորդները և նոցա մայրը անխնայաբար ծիծաղում էին նորա վերայ իրանց հիւրերի հետ միասին, ագահութեամբ ուտում էին այն քաղցրաւենինները, որ նա համարեայ փթերով բերել էր տալիս նաբնից և Պետերբուրգից, վայելում էին անանասները և հագուագիւտ պտուղները, որոնք, ինչպէս նա երդում էր, ածել էին նորա ջերմասենեախներում, որ նա մի ամիս առաջ սարգել էր: Նա իրեւ մի լուսաւորեալ տղամարդ, շնարում էր ամենատեսակ բաւականութիւններ մեր օրիորդների համար: Մի անգամ նա բերեց մի թանկագին հրաձիգ փամփուշտ, և քիչ է մնում, որ այրի ամբողջ տունը և իրան սպանի, որովհետեւ վերելից կրակ տուեց պատրոյներին. բարեբաղաբար նոքա թրծուած էին, որովհետեւ նա նորանց ամբողջ զիշերը խոտերի մէջ էր թողել այդ պատճառաւ նոքա իսկոյն չ'բանկեցան, այլ միայն երբ նա արդէն մի քանի քայլ հեռացել էր և խանձեցին նորա միայն մազերը: Օրիորդները արգելեցին նորան հրաձգութիւններով պարապել և սկսեցին պահանջել նորանոր զբաններ: Վերջապէս մի կիւրակի նա եկաւ ծածկած կառքով, որի լուսամոխ վարագոյներն էլ ծածկած էին: Կառքից դուրս թռչելով նա հրամայեց պաշտօնազդեստ հագած ծառային, որ նստած էր կառավարի մօտ, ոչ ոքի մօտ.

չթողնել կառքին և մօտեցողին վոնտել և յետոյ
հանդիսաւոր կերպով շտապեց գէպի սանդղաները:

— Ի՞նչ, մեզ էլ վոնտի, ինչ լաւ բաներ էք
ասում, ձայնեցին առաջ վագելով օրիորդները:—
Լաւ, Բարսեղ Աթանագինեան:

— Բարսեղ Աթանագինեանը սաստիկ շփոթուեց
և քթի տակ փնթվինթաց:

— Ամենից աւելի հէնց դուք չպիտի տեսնէք
մինչև չգուշակէք, թէ ինչ եմ բերել: Նատ հետա-
քըրքրական բան է, և չէք կարող երևակացել թէ
ինչ է նա. բաւական կմնաք: Զէ, չեմ ասի, այլ կը
ցոյց տամ' երբ կ'գուշակէք:

Օրիորդները ոչ մի կերպ չկարողացան գուշա-
կել և բանը նորանով վերջացաւ, որ Բարսեղ Աթա-
նագինեանը սրահից վագեց և կառքից մի փոքրիկ
կենդանի, հանելով, նստացրեց նորան իւր ուսի վե-
րայ և տարաւ վերև: Նորա ընկերոջ մենք առաջ
երեխայ կարծեցինք, բայց աւելի մօտից զննելով
անսանք, որ դա մի թզուկ էր և այն էլ շատ նշա-
նաւոր թզուկ: Նորա բոլոր անդամները բոլորովին
համապատասխան էին միմեանց. ձեռքերը, ոսները
խիստ փոքր ու պնդակազմ էին. Հինգ տարեկան ե-
րեխայի հասակ ունէր: Գլուխը ուրիշ թզուկներից
անձոռնի մեծ չէր, այլ այնքան, որքան լինում են
մանուկների գլխները մարմնոյ հետ համեմատելով:
Դէքի զծազրութիւնը տգեղ էր, բայց անշնորք ու
զզուելի չէր: Նորա փոքրիկ գորշ աչքերը համար-
ձակ ու սրատես էին. լայն բերանը ծիծաղելի կեր-

պով ժպտում էր և այդ ժպիաը կարծես թէ շար-
ժում էր բոլոր մկանունքները: Նիկափայլ մազերը,
որոնք հիւսած ու օծած էին, գանգրացած էին ոչ-
խարի բրդի նման: Երբ Բարսեղ Աթանագինեանը
թողեց նորան, թզուկը ուղղուելով կանգնեց և սկսեց
նայել բոլոր խմբին:

— Հը, տեսնում էք հսկային: Եւ ինչ վար-
պես է զուարձացնելում: Մօտ օրերումն գտայ սո-
րան, տիկինի պէս հազգրի և բերի ձեզ մօտ, ախ-
կիններ, նայեցէք, լաւը չէ: Սա վեց հատ այդպիսի
մետաքսեայ շապիք ունի, նոր ձեւի կարած, և
Լիօնեան ամենամաքուր թաւշից բաձկոն. նայեցէք:

Օրիորդները խոստովանեցին թզուկի երկնա-
զոյն շապիք կտորի և թաւշեայ բաձկոնի ազնւու-
թիւնը:

— Ժապաւէնն էլ զուտ ուկուց է: Մենք վատ
բանի փող չենք տալ: Այ զու սրիկայ, ինչ բաշ-
տաւոր չես, փուչ կենդանի:

— Բաղտաւոր եմ, պատասխանեց թզուկը, ըստ
երեսութիւն բալորովին չվերաւորուելով միեւալ ա-
ծականից:

— Իսկ ով բաղտաւորեց քեզ, ումն ես պարտա-
կան շնորհակալ լինելու, գիտես այդ:

— Ի՞նչպէս չիմանամ, քանի որ դուք օրը քա-
ռասնից քառասուն անգամ յիշում էք նորան:

— Հա, հա, հա, քառամնիցս քառասուն ան-
գամ, ինչ խեղկատակ է, հիացած ձայնեցին իմ օ-
րիորդներս:

— Ես ձեզ վաղ ասացի, որ խեղկատակ է և պրայափայել գուարձախօս։ Աննա Յովհաննիսեանը անցեալ որ ձեզ պատմում էր, որ հին ժամանակները մեծ մարդիկ, թագաւորներն ու թագուհիք իւրեանց մօտ թղուկներ էին պահում։

— Որտեղից ձեռք բերիք դորան, բարսեղ Աթանագինեան, ասացէք խնդրում ենք, ախ, դա ուրան սիրելի է, հիացած ասում էին օրիորդները։

— Էյ, պատմիր։

Թագուկի ժամող դէմքը ծանր կերպարանք սոտացաւ։

— Ես չեմ պատմի այդ, ինքդ պատմիր։

— Ի՞նչ ինձ չե՞ս լսում։ Գիտե՞ս ես քեզ ինչ կանեմ։ Իմացիր, որ գեռ մօրդ փող էլ չե ուղարկուած։ Թգուկի դէմքը փոխուեց և ընդունեց առաջուայ ծիծաղիոտ արտայսյութիւնը, միայն այդ ժպիտը աւելի նենգաւոր էր։

— Թո՞ղ այդպէս լինի։ Ահա, լսեցէք, աղնիւ պարոններ, սկսեց նա, ոտը ոտի վրայ դնելով և շարժելով փոքրիկ ձեռքը, ցուցամատը մեկնած, որով նա երբեմն բրդում էր բարձրահասակ բարսեղ Աթանագինեանի ծունկը և երբեմն էլ իւր կուրծքը։

— Հայրիկս սորա հօր բանւորն էր։ Լաւ աշաշսատասէր, ժրաջան և անձնուեր բանւոր էր և մեղք էր նորա համար, որ այնքան ժլատ էր դէպի նա։ Մեղենան խանգարուեցաւ։ Նորան ասացին, թէ նորն է հարկաւոր։ Նա թէ կ'նորոգեմ այդ։ Ասացին անվստահելի կ'լինի այդպէս թողնել, աշխատող ներին կարող է վնասել բայց նա լռեց, մտածելով։

որ որքան էլ վնասէ գործաւորներին, նոյն փող չե տալ իսկ փողերը պէտք կ'գան և օրուայ համար։ Ահա պէտք էլ եկաւ այժմ ինձ մետաքսեայ ու թաւշեայ ծաղրաշարժ շորերով զարդարելու համար։ և այդ միջոցին էլք Բարսեղ Սիմէօնեանը (թղուկը) ինքնահաճութեամբ նայեց իւր շուրջը ուղղուելով, որով պատճառեց մի նոր բարձրածայն ծիծաղ։

— Ուրախ են գեղեցիկ օրիորդները, ուրախ են, բայց ոչ ամենքը, ասաց նա, տեսնելով, որ ես չեմ ծիծաղում։ Այսպէս, երբ հայրս բանեցնում էր մեքենան, մի բան ճաքեց նորա մէջ, լծակնէր թէ ինչ էր կոտրուեց և սուր ծայրով դիպաւ հօրս կրծքին։ Յայտնի բան է, մարդս մեքենայ չէ, որ նորոգես։

— Եւ չնորոգեցին, ծիծաղելով հարցրեց բարսեղ Աթանագինեանը։

— Ու էլ բանի պէտք չեղաւ, միայն պէտք էր արկղի մէջ փակել և թաղել գետնի տակ։ Սորա հայրը այդպէս էլ որոշեց և երբ մայրիկս ողբարով դիմեց նորան՝ իբրև մի մեծ ողորմութիւն մի ուուրելի տուեց թաղման համար։ Յայտնի բան է, մօրս արածը յիմար էր ու կոպիտ, նա փոխանսակ ողորմած ձեռքը համբուրելու, երեսին խփեց մանէթը։ զգացմունք ունէր։ Մեր հօրը թաղելուց յետոյ սկըսանք անհայր ապրել։ Մենք ապրում էինք երբեմն ցամաք հացով, երբեմն էլ հաց ու դատարկ արգանակով։ Բացի ինձանից հինգ հոգի կային մեր տանը։ Հօրս կենդանութեան ժամանակ, խելօք մարդիկ ա-

սում էին նորան, որդուդ ձեռնածուներին տուր, շատ փող կ'հաւաքես դորանով և յիրաւի ով չեր տայ ինձ մեծ գումար: Այո, յիմար էր հանգուցեալը. «Ես չեմ կամենում, ասում էր նա, որ իմ երեխիս վերայ ծիծաղեն: Այսպէս երբ նա մեռաւ, մայրս, յայտնի բան է, իրբե. Կին չեր կարող մարդուց խելօք լինել նոյնպէս չկամեցաւ լսել ոչ մի խորհուրդ ինձ մի աեղ տալու. աւելի լաւ է, ասում էր, ցամաք հաց կուտեմ, քանի ձեռքեր ունիմ, քան երեխաս ծաղըուծանակ կ'զարձնեմ: Այսպէս ահա նա ինձ այսպան տարի թշուաւ թողեց: Նո ինքս էլ տամնութ տարեկան լինելով՝ թէն ընդունակ էի, բայց այդպիսի ծնօղներից ոչինչ խելք չկարողացայ սովորել և իմ լաւն ու վատը չի իմանում և երբ պատահում էր ինձ հետ խօսում էին դորա մասին, գեռ նեղանում էի էլ անխելքութիւնից: Մօրս օգնելու համար ես սովորեցի ասղնէգործութիւն և մեծ քրօջս հետ գործում էի ու լաւ էի գործում:

Թագուկի բարակ ձայնը զարձեալ ընդմիջուեց բոլոր ընկերութեան բարձրաձայն ծիծաղով:

— Տիսրադէմ օրիորդ, ինչով կարող եմ զուարձացնել ես ձեզ, ձեզ այն էլ ծիծաղելի չժուաց, որ ես ասղնէգործէի:

— Հա, հա, հա, ասղնէգործ, վայ թուլացայ, գոռգոռում էր Բարսեղ Աթանազինեանը, բայց շորեր չեն կարել:

— Կարել եմ, պարապել եմ քրօջս հետ բոլը կանացի պարապմունքներով, բացի նորանից միայն, որով օրիորդներն են պարապում:

— Բայց ի՞նչ արհեստով են պարապում օրիորդները:

— Յայտնի է թէ ինչով:

Եւ Բարսեղ Սիմէօնեանը ձգուեցաւ բազկաթուի մէջ, ձեռքերը ծալեց, մազերն ուղղեց, յետոյ էլի ձեռքերը ծալեց, վեր առաւ գիրքը, թոյլ թոյլ մի քանի թերթ շուռ տուեց, կրկին ծալեց ձեռքերը և յոդնած մարդու ամենածիծաղելի գիրքով մնաց նստած մի քանի րոպէ: Վերջապէս վերկացաւ, կանդնեց պատուհանի առաջ, իրբե հայելի ընդունելով նորան և սկսեց վարպետութեամբ ներկայացնել թէ ինչպէս օրիորդները սանրում են, հագնուում են, միւնոյն ժամանակ ուղղելով դէպ'ի աղախինը բարկացու հայացքներ, կոպիտ բառեր և երբեմն էլ կմշտելով նորան: Նորա մնջկատակութիւնը այնքան մօտ էր բնականին, որ ես սրտանց ծիծաղեցի. ծիծաղեցին և իմ օրիորդները, միայն կեղծ ծիծաղով:

— Կամենում էք փիլիսոփայութիւն էլ անեմ, յանկարծ գարձաւ նրանց ստրկական խոնարհութեամբ:

— Խելքիդ զօռ տուր, լաւ ծիծաղ կ'լինի, ձեռքերը շփելով ասաց Բարսեղ Աթանազինեանը:

Թագուկը ծանրախոչ կերպարանք տալով իւր գէմքին, իւր փոքրիկ մատը ճակատին զրաւ:

Ես այժմ հասկանում եմ, թէ ինչու աշխարհում մարդիկ լինում են զանազան հասկացողութիւնների տէր, ասաց նա, ծանր և գոռող ձայնով, զորօրինակ եթէ միքանիսի մօտ միւնոյն խօսքն ասես, նրանցից ամեն ոք կհասկանայ իւր տեսակ: Ահա

ինչպէս ես հէնց այս րոպէին ցոյց էի տալիս թէ օրիորդները ինչպէս են պարապած իրանցով. այստեղ Աննա Յովհաննիսեանը և միւս օրիորդները այլ և այլ կերպ ծիծաղեցան. Աննան ծիծաղեցաւ շատ ուրախ, թէպէս մի փոքր էլ բարկացաւ. իսկ միւսները շատ տիտոր և համարեայ թէ բռնի: Ես կարծում եմ այս զանազանութիւնը նորանից է յառաջ գալիս, թէ Աննա Յովհաննիսեանը դգաց, որ ես բոլորպին նման էի շարժւում միւս օրիորդներին: Այդպէս էլ պէտք է լինէր. ում բարկութիւնը չի գալ եթէ նրան ներկայացնես: Ընդհակառակն միւս օրիորդները շատ տրատում դէմք ցոյց տուին. և եթէ մի փոքր էլ ժամացին, այն էլ համարեայ ակումայից և ինձ չ'վերաւորելու համար. ըստ որում ինչ ծիծաղ, երբ ոչինչ նմանութիւն չես գտնում իմ ներկայացմանս և նոցա շարժուածքի մէջ:

թօղուկը համակրութիւնս դրաւեց. նա իմ կարծածից շատ աւելի խելօք թուաց ինձ:

Փիլսոփայութիւնս դուր չեկաւ, հարցրեց նա նկատելով իւր ունիսդիրների անքնական դէմքերը: Ներողութիւն, ուրիշ բան չգիտեմ: Թող իմ կրթութեան համար վատնուած լինէր չէ թէ ոսկու կոյտեր, ինչպէս ձեզ համար, այլ մի քանի կոպէկ դրամներ, այն ժամանակ ես..... Թղուկի ձայնը դողդողաց և նա փղձկեց:

— Ի՞նչ եղաւ քեզ, Բարսեղ Արմէօնեան:

— Այն դէպքում ես չոր հացով կապրէի և ոչ թէ այսպէս շապյութեամբ կվատնէի. և թղուկը գրգռուած երեք անգամ պտոյտ եկաւ կրնկի վերայ և դէմ առ դէմ կանգնելով բարձր ձայնով ծիծաղող

խմբին, հպարտ դիրք բռնեց ձեռքերը կանթելով: Բայց քեզինչպէս գտաւ Բարսեղ Աթանազինեանը. դու չվերջացրիր խօսքի, մտաքերեց նորան օրիորդներից մէկը:

— Ահա ինչպէս. քոյրս շատ ժապաւէն գործելուց կուրացաւ, որովհետեւ վաղուց արդէն նորա աչքերը ցաւում էին. բժիշկն ասում էր, որ խուլէ, պատուիրեց չոր ու տաք տեղ բնակուել, լաւ միս ուտել և գործ չշնել, մանաւանդ ճրագի տակ: Իսկ քոյրս անխելքութեամբ գիշերները երկար նստում էր մեքենայի մօտ և գիտմամբ սկսեց աւելի նուրբ ժապաւէններ գործել մտածելով, որ աւելի թանգ կ'վաճառէ: Եւ բնակում էր այնպիսի սենեակում, որի պատերը մամուռ էին ծածկած. ուտում էր երբեմն միայն հաց շրվայով և երբեմն էլ չոր հաց: Ինչպէս ես լսել եմ, շատերի կարծիքով այդ կերակուրը օգտակար է ինձպէսներին, որի համար վասք պիտի տանք Աստծուն. իսկ քրօնս պէտք եղած մնունդը չէր տալիս՝ դարձեալ իւր անխելքութիւնից: Երբ նա կուրացաւ, մայրս 'ի զուր շատ էր լսց լինում, բայց լացը չի օգնիլ յետոյ ինքն էր աշխատում երեքիս տեղ. նա էլ շորերը ողորկելիս մրսեց: Վերջապէս մենք երեք օր ոչինչ չկերանք. քոյրս փոքր քրոնս հետ գնաց ողորմութիւն հաւաքելու, ես էլ փոքր եղբօրս հետ գնացի: Այսեղ պատահեց ինձ Պ. Պուրանինը, ազնուականների գլխաւորը, որ ոստք ուտելով հոգին տուաւ: Ես նորան գուր եկայ. և թղուկը նորից ուղղուեցաւ: Պ. Պուրանինը բարձր խելքի տէր մարդ էր. նա խկզն իմացաւ, որ իմ տեղը եկեղեցու դռան աղքատների մօտ չէ, այլ ինձ

սպասում է մի աւելի նշանաւոր ապագայ. Հարցրեց իմ ով լինելու, մօրս մասին և կանչեց իւր մօտ կենալու և ինձնով այնքան ուրախ էր, որ մօրս ռոճիկ նշանակեց, իսկ կոյր քրօջս աղքատանոցը տուաւ, էն մարդը գիտէր գնահատել իրան ուրախացնողին:

— Իսկ ես զգիտեմ միթէ, ապերախտ անսառուն, զայրացած գոչեց բարսեղ Աթանագինեանը:

— Ես այդ չասացի, բազմերախտ պարոնս: Զեր մասին յետոյ կ'գայ: Նրկու տարի մնացի Պ. Պուրանինի մօտ, գոհ իմ վիճակից, բայց ոչ այնքան, ինչպէս այժմ: Պ. Պուրանինը մեռաւ: Նորա ժառանգ որդին, մի նորասէր երիտասարդ, դուրս արեց տանից ինչպէս ինձ, նոյնպէս և բոլոր այն մարդոց, որոց վերայ Պ. Պուրանինը բարիք ունէր. իսկ ինքը գնաց արտասահման. ես էլ մի տարի մօրս մօտ կացայ. ապրուստս հոգում էի վաճառականների խնջոյքներում և հարսանիքներում պար գալով: Եւ ես շարունակ մտածում էի, թէ ինչպէս գտնեմ դարձեալ մի այնպիսի բարերար, ինչպիսին հանգուցեալն էր: Բայց բաղադր չէր յաջողում: Վերջապէս ես լսեցի բարսեղ Աթանագինեանի մասին և ինքս ինձ ասացի, կամ նա կամ ոչ ոք: Ուրիշների խօսքով նա բոլորովին հանգուցելոյ նման էր: Ես խնդրում էի իմ բարերարներին ծանօթացնել ինձ նորա հետ: Նոքա չէին համարձակում, որովհետեւ, ասում էին, բարսեղ Աթանագինեանը այժմ միայն լուսաւորեալ մարդոց հետ գործ ունի: Նատ մտածելուց յետոյ ասացի մօրս, ինքս կ'գնամ: Նա, ինչպէս և առաջին անդամը Պ. Պուրանինի մօտ թողնելիս, դառնու-

թեամբ լայ եղաւ, և ձեռքը յուսահատութեամբ շարժեց: Այդպէս ուրեմն դիմեցի նոցա ողորմութեանը: Մի առ մի ասացի նորան, թէ ես լսել եմ, որ ձերդ ողորմածութիւնը փող շատ ունի, և չգիտէք թէ ինչպէս ծախսէք և ձանձրութիւնից շուարած էք. վերցրէք ինձ ձեզ մօտ, ես այնպիսի խօսքեր գիտեմ, որից տիրութիւնը տասնաւոր վերստեր հեռու կ'փախչի մեղանից: Իսկ նոքա այնքան ողորմած գտնուեցան, որ ինձ ջուխտ ձեռքով բռննեցին: Ափսոս, որ մի փոքր վաղ չգնացի: Խմ մասին արդէն լսել էին: Այդպէս մենք վճռեցինք և ստորագրեցինք պայմանաթուղթը, որով ամիսը 30 մանէթ ռոճիկ էր նշանակում ինձ և իմ պահանջմանս համեմատ մի տարուան վարձս այս գլխից էր խոստանում վճարել. ինձ հագցրին: Ամբողջ գիշերը լուսացնել տուխն գերձակ-տիկնօջ՝ շորերս հասցնելու համար: Այսօր ինձ զարդարեցին և բերին այստեղ: Եւ թղուկը վերջացնելով պատմութիւնը խոնարհութեամբ գլուխ տուեց նոցա:

— Ո՛հ, շոգ է, կոկորդս չորացաւ, ասաց նա և լոեց:

— Դու ծարաւ կինիս, ի՞նչ ես կամնում խմել, ջուր թէ կվաս, հարցրեց տանտիկինը:

— Լիմնաղ գաղես, պատասխանեց նա կապար բարսեղ Աթանագինեանի դիրքն ընդունելով:

— Հեղինէ, ասա լիմնաղ բերեն, տօսց նա իւր աղջկան: Օրիսրդը, որ ինչպէս երեւամէ, կարծում էր թղուկները մարդու պէս չեն ուտում խմում և այդ պատճառաւ շատ էր հետաքրքրում

Բարսեղ Սիմէօնեանի խմելը տեսնելը վազեց կանչեց ծառային, որ խնկոյն եկաւ արծաթեայ սկուտղի մէջ դարսած բերելով լիմօնադ, շաքարաման և մի շեշ ջուր: Լիմօնադը շինուած էր: Բարսեղ Սիմէօնեանը ձգուելով բազկաթոռի մէջ հրամայումէր իրան տալ երբեմն շաքար, երբեմն կիտրոն, իսկ օրիորդները միմեանց ձեռքից խլելով կատարում էին նորա պահանջը: Լիմօնադը պատրաստ էր նա խմեց և ասաց, որ տաք է: Հեղինէն, չնայելով այն շոգ եղանակին, վազեց կիզող արեկ տակ բակի միջով ներքնասնից սառոյց բերելու: Բարսեղ Սիմէօնեանը շատ էր դուարձանում, որ օրիորդը նորա համար վազումէր:

— Ենորհակալ եմ սառոյց բերելուդ համար, գոչեց նա ծանրաբար գլուխը շարժելով և մի ահագին կտոր ձգեց բաժակի մէջ, որով առիթ ունեցաւ օրիորդին նորից ջրի ուղարկելու:

— Աննա Յովհաննիսեան, դուք գնացեք, դարձաւ ինձ հեղինէի մայրը, նկատելով, որ աղջիկը կրակի պէս կարմրել է:

— Զեմ խմի մինչ նա զդնայ, չեմ կամենում:

— Միթէ Աննա Յովհաննիսեանը քեզ դուր չեղալիս, հալցրեց Բարսեղ Աթանագինեանը:

— Զի դուր գալիս. պատասխանեց թզուկը:

Հեղինէն վազեց ջուր բերելու. վերջապէս լիմօնադը պատրաստ էր:

— Զգոնմ ես, յիմար, այն պատիւը, որ Հեղինէ Գէորգեանը անումէ քեզ վազգվելով քեզ համար, ասաց Բարսեղ Աթանագինեանը. արժանի ես դու նրան:

— Զգում եմ, շատ լաւ զգում եմ և գիտեմ, որ

այս պատիւը միայն իմ մեծութեանս են տալիս, որ ոչի չէին տալ և որ մինչեւ անգամ պատուհանից հաց խնդրող մաւրացկանի համար էս շողին տեղից չէին շարժուիլ: Կասկանում եմ նոյնպէս, թէ որքան անարժան եմ նորան և այդ խակ պատճառաւ չեմ համարձակում խմել:

Բարսեղ Սիմէօնեանը բաժակը վեցըրեց, օդի մէջ ձեռքով մի շրջան արեց, իր բերանին մօտեցնելու, յանկարծ ձեռքը շարժեց և 'ի զարմացումն բոլորի՝ լիմօնադը լուսաւոր կաթիներով ցրուեցաւ պատշաճմի վանդակների միջից: Օրիորդները տժգոհ շարժմունքներ արին, որովհետեւ զրկուեցան թզուկին խմելիս տեսնելու բաւականութիւնից: Բարսեղ Աթանագինեանը շտապեց ցրուելու անբաւականութեան ամպերը, ստիպելով թզուկին զանազան խեղկատակութիւններ անել ցոյց տալ թէ ինչպէս էր ողորմութիւն խնդրում, ինչպէս էր մանում, ինչպէս էր պարում Պուրանինի մօտ և ինչպէս նորա ձանձերն էր քշում, երբ նա ձաշեց յետոյ քնում էր: Բարսեղ Սիմէօնեանը առաջուայ պէս կոտրտում էր: Որքան որ հոգատար մայրը կամենում էր նոցա փոխանակ ինձ ուղարկել, թզուկը յայտնում էր թէ չե կամենում: Բարսեղ Աթանագինեանի հարցին, թէ ինչո՞ւ ես դուր չեմ գալիս իրան՝ պատասխանում էր չե դուր գալիս: Այս բանը աւելի էր զրգուում օրիորդների անձնասիրութիւնը և նոքա մոռանալով այրող արեւ, իրանիք էին մէջ ընկնում, որ թզուկը բանի զնի նոցա: Փոխադարձ զուարձութիւնը եր-

կարոցաւ, փոխադարձ՝ որովհետեւ թգուկն աւելի էր զուարձնանում նոցանով, քան թէ նոքա իրանով։
 Հաշին նոր հիւրեր եկան։ Բարսեղ Սիմեօնեան
 նին ստիպեցին երկու բաժակ զինի խմել և նա ա-
 ւելի գժուեցաւ, նա այլ ևս իւր հանաքներով չէր
 կարողանում ծածկել իւր ծաղը, այլ հանաքներին
 արհամարհական ծաղըներով էր պատասխանում, ո-
 րոց նենգութիւնը ծիծաղից թուլացած հիւրերը
 չէին նկատում։ Միայն նա կամակրութեամբ ինձ չէր
 նկատում, կամ աւելի ծիշտ, ցոյց էր տալիս թէ չէր
 նկատում, և ես զգում էի, որ ինձ աշքից չէր թող-
 նում։ Բարսեղ Աթանազինեանը, որ շատ էր ցան-
 կանում պահուիլ ազնուատոհմ աղջկայ վրայ և այդ
 պատճառաւ ինձ հետեւում էր միշտ, շատ էր նեղա-
 նում թզուկի վերայ նորա դէպի ինձ անուշաղըու-
 թեան համար, բայց նորա բոլոր հրամաններն ու
 սպառնալիքները չգնեցին։

— Այս, Բարսեղ Սիմեօնեան, գեղեցիկ օրիորդ-
 ները աշքի տակից քեզ են նայում, հա, շասես չէ,
 ծիծաղելով տասց հիւրերից մինը։

— Այս, նայում են, պատասխանեց թզուկու։

— Դու հօ մէկին չ'ծոկեցիր, ձշմարիան տան։

— Զօկեցի թէ չէ, ձեզ ի՞նչ ես ու բարերարա
 մեր բանը զիտենք։

— Ո՛հի, բարերարից հետ, միթէ նա էլ, հե-
 տաքըքութեամբ հարցրեց Հեղինէն, բայց տեսնենք
 օրիորդները կուզեն։

— Ան որ իմիս է վերաբերում, չէր ուզել բա-
 ցագանչեց թզուկը աժդակութեամբ։ Իսկ բարերա-

րինս էլ կարող եմ ասել նոյնպէս չէր ուզել։ Միթէ
 մարդուս սիրար կ'սիրահարուի՞ մի ոսկու տոպրակի
 չետ։

— Դուրս տուր, դուրս տուր, վայրահաչ բայց
 շափդ ճանաչեր, զայրացած գոչեց Բարսեղ Աթանա-
 զինեանը, տանից դուրս կանեմ քեզ։ ո՞ր աղջեկը
 կուզե քեզ, յիմար։ Ո՞վ կնայի երեսիդ, մարդ-
 կութեան նախատինք ես դու։ Թզուկի գէմքը դառ-
 նացաւ այս տմարդի լիշատակութեան վերայ, որ
 նորան զըկում էր մարդկային բաղտաւորութեան
 մասնակցութիւնից, սիրոյ քաղցրութիւնից և որ ի-
 րան մարդկութեան նախատինք լինելը երեսովը տու-
 եց։ Աս շատ խղճացի նորան։ Աս կանգնած էի նորա
 մօտ և ակամաց շարժուածքով բռնեցի նորա փոք-
 րիկ ձեռքը։ Նա պինդ սեղմեց ձեռքս և հանդիսա-
 ւոր կերպով ցոյց տուեց բոլոր խմբին։

— Ես վայրահաչ եմ։ ահա նոյն իսկ գեղեցիկ
 օրիորդը տալիս է ինձ իւր ձեռքը։ Բայց թող փորձէր
 իմ բարերարա առաջարկել նորան աշխարհիս բոլոր
 միհօնները իւրն էլ հետք, սա չէր տալ նորան իւր
 ձեռքը։ այն չէր տալ։ Բարսեղ Աթանազինեանը այն-
 պէս կարմրեց, որ բոլոր խումբը նկատեց նորա շփո-
 թուած զէմքը։ Օրիորդները զարմացած նայեցան
 միհեանց, շրթունքները կրծելով, նոքա կարծում էին,
 թէ Բարսեղ Աթանազինեանը մտադիր է պատկուել
 նոցանից մէկի վերայ և սպառում էին այն բաւակա-
 նութեան, որ մտադիր էին Պետերբուրգ դառնալուց
 յետոյ վայելել, ասելով թէ մերժել են միհօնաւոր
 մարդուն։

— Դու ինչու այդքան փոքր ես, հարցրեց
հիւրերից մէկը—Բարոն Մենգելը:

— Ինձանից չէ, պարոն Մենգել ինձանից չէ
հասակիս փոքրութիւնը. ես 'ի ծնէ այսպէս եմ. ես
պարզ մարդ եմ, ով էր տուել ինձ այնքան խորա-
մանկութիւն, որ ես կարողանայի ինձ փոքրացնել:
Այդ գիտեն խելացի մարդիկ, ինչպէս և Ձերդ ողօր-
մածութիւնը: Իմ միտս է, թէ ինչպէս ձերդ մեծ-
անձն ողորմածութիւնը միանգամ իմ բարերար Պ.
Պուրանինի մօտից դուրս եկաւ մինչեւ ծնկներս խո-
ռարհած և թզուկը աչքը ձգելով Բարոնի բարձր
հասակի վերայ՝ իւր փոքր ձեռքը վերելից ներքե-
քերեց մինչեւ իւր ծնկները: Այն ինչ ինքը հազիւ-
բարոնի ծնկների բարձրութիւն ունէր: Եւ ես զար-
մացայ այն ժամանակ ձեզ վերայ, և շատ զարմա-
ցայ, թէ ինչպէս այնքան մեծ մարդը՝ այն աստիճան
փոքրացաւ:

— Դեհ, լոիր, յիմար, խօսքը կտրեց շարա-
ցած Բարոնը:

— Ես, ձերդ ողորմածութիւն, յիմար չեմ, և
ինձ հրամայել կարող է միայն իմ բարերարս, ոսկու-
պարկը: Կ'կամենայ կիսում, չի կամենայ կ'լում:

— Խօսիր, խօսիր, աղաղակեց Բարսեղ Աթա-
նազինեանը, ուրախանալով, որ Բարոնից վեր դա-
սուեցաւ:

— Ես կ'ինդրէի տանտիկնօջ, որ իւր իրաւամբ
լոեցնի նորան, նա հարբած է, ինչ ասես դուրս
կ'տայ:

— Հարբած եմ, բայց խելքս դլխիս է և պա-

տիւս Ճանաչում եմ. ես մի փոքրիկ մարդ եմ և խօս-
քի տեղը գիտեմ: դուք հանգիստ կացէք, դարձաւ
թզուկը դէպի տանտիկնը:

Տանտիկինը տեսնելով նորա շփոթմունքը, հա-
նաքով թզուկի կողմը բռնեց. նա յոյս ունէր Բարո-
նի մասին մի բան իմանալու: Հեղինէն, որ հաւա-
նում էր Բարոնին, ասաց.— Բարսեղ Աթանազինեան,
լոեցրէք ձեր թզուկին:

— Ես միշտ յօժարութեամբ կատարել եմ ձեր
բոլոր ցանկութիւնները, օրիորդ Հեղինէ, թոյլ տուեք
այս անգամ էլ օրիորդ Աննաի ցանկութիւնը իմաւ-
նալ խոնարհաբար գլուխ տալով պատասխանեց Բար-
սեղ Աթանազինեանը, գուշակելով, որ ես խիստ էի
ցանկանում իմանալ թէ ինչու՞ն էր բանը:

Ես խնդրեցի Բարսեղ Սիմէննեանին՝ խօսել
չնայելով Հեղինէի բարկացոտ հայացքին:

— Այսպէս պատահեցաւ այն միջոցին, սկսեց
արդէն առանց քաշուելու Բարսեղ Սիմէննեանը,— երբ
բարոնը. Պ. Պուրանինի որդուց տարաւ յիսուն հա-
զար: Մինչեւ խաղի վերջը սեղանի մօտ նստած զար-
մանում էի, թէ ինչո՞ւ բարոնին այդպէս յաջողում
է բաղը: Խաղից յետոյ Պ. Պուրանինի որդին հիւ-
րերի հետ դուրս գնաց շատ յուղուած: Հիւրանոցի
ծառան (նոքա հիւրանոցումն էին խաղում) եկաւ
թղթերը հաւաքելու. բարոնն ասաց որ, թղթերը
իրան պէտք են, և նոցա տեղը փող բաշխեց:

Այս խօսերի վերայ բարոնը մեռածի պէս
գեղնեց, կամենում էր վրայ ընկնիլ թզուկին, բայց
ուշքի եկաւ և ակամայ ժպիտով ասաց.

— Ա աւ, դուրս տուր, շարունակիր:

— Ես եղած բանն եմ ասում. ծառան ուրախ ուրախ պարձենում էր խոհանոցում, իսկ ես հրաւիրուած էի հիւրանոցի խոհարարուհու մօտ, որ իմ կնքամյըս է: Հետաքրիզութիւնս շարժուեց տեսնելու այն բաղտաբեր թղթերը, ես գնացի բարօնի մօտ և հանեցի խաղաթղթերի կէսը ու տարայ ցոյց տալու Պ. Պուրանինին: Թէ ի՞նչ կար նոցանում՝ այդ չգիտեմ, միայն Պ. Պուրանինը գրկեց ինձ և իրան բարերար անուանեց: Միւս առաւօտ բարօնը Պ. Պուրանինի որդու ստորագրութիւնը ձեռին եկաւ փողերը ստանալու, և այնպէս հպարտութեամբ մտաւ, որ ձեռքդ չեր համնի, իսկ դուրս եկաւ այնպէս կորացած, որ հազիւ թէ ծնկներիս բարձրութիւն ուներ: Նւ թղուկը նորից ձեռքը բարձրացրեց բարօնի բարձրութեամբ և իջեցրեց մինչև իւր ծնկները:

Ամենքը հասկացան, որ բարօնը խարդախութիւն էր արել որ նորա թղթերը նշանած են եղել այնպէս որ նա իմացել էր, թէ ում ձեռքը ի՞նչ թուղթ կայ: Դա այնպիսի մի ստորութիւն էր, որի համար նա կարող էր գատի ենթարկուել: Նա խարելով Պ. Պուրանինի որդուն, պահանջում էր նորանից տարած փողը:

Ամենքն էլ շփոթուեցան և չգիտեին ինչպէս վարուել այնուհետեւ բարօնի հետ:

Թղուկը շարունակում էր զբաղեցնել խմբին, ներկայացնելով թէ ինչպէս են մեծ մարդիք փոքրանում: Ի՞նչպէս մեծ տիկինը բարձրից գոռում է դերձակ աղջկայ վերայ, երբ նա գալիս է իւր աշ-

խատանքի վարձն ուղելու, իսկ ինչպէս փոքրանում է, երբ պատահհում է մանել մի ֆրանսիացու նուրաձեռւթեան մեծ խանութ, ինդրելու ապառիկ պատրաստել իւր համար էլլ մի ձեռքնոր հագուստ. ինչպէս աստիճանաւորը այնքան հպարա կանգնում է դիւլացու մօտ, որ ընկած էր նորա ոտները և ինչպէս փոքրանում է, երբ իշխանաւորը յանդիմանում է իրան:

— Ա ենք պարզ մարդիք ենք, այդպիսի խորամանկութիւններ չգիտենք. այս խօսքերով վերջացրեց Բարսեղ Սիմեօնեանը իւր զերը:

Արեկցյան նորան ստիպեցին երգել պարել վաղվել մանուկների հետ, որոնք անդադար ոտները դէմ էին տալիս և թղուկը վայր էր ընկնում. մի նոր բան էլ մտածեցին. նորան հրամայեցին մէկ ծաղկէ փունջ չնորհել այն տիկնօջ, որին աւելի կհաւանէր, և ծաղկի փոխանակ ծածուկ նորա ձեռքը դրին մի կապ եղինջ: Բարսեղ Սիմեօնեանի աշքերը արտասուքով լցուեցան, բայց նա չշփոթուեցաւ և վայր ձգելով վարդը աներկիւղ վերցրեց եղնջի կապը և առաջարկեց տանտիկնօջ:

— Քեզ վայել է, մայրիկ, քո որդիկերանց շնորհիւ է պատրաստած, ասաց նա խոնարհաբար զլու և տալով:

Տիկինը այսակեղ յայտնի բարկացաւ և ասաց, որ քնելու ժամանակն է:

Խումբը հաստատեց նորա խօսքը և Բարսեղ Սիմեօնեանի խաղերը շատերին դուր չեր եկել և Հեղինէն զայրացած յանդիմանեց Բարսեղ Աթանազի-

նեանին նորա համար, որ չէր սովորցրել թզուկին,
թէ ինչ տեսակ բաներ կարելի է խօսել.

— Գնա, քնիր, յիմար, բարկացած հրամայեց նո-
րան Բարսեղ Աթանագինեանը:

— Հնազանդ եմ, մնաք բարով, պատուելի խումբ.
շմուանաք ինձ. ցաեսութիւն հայր, և զլուխ տուեց
թզուկը ընկերութեան և իւր բարելարին:

— Ես քո ի՞նչ հայրն եմ, հարցրեց բարերարը:

— Մնաս բարեաւ, հարազատ հայր, կրկնեց թզուկը
պատրաստուելով մի բան ել ասել գնալիս:

— Ես ի՞նչ հայր եմ այսպիսի մի յիմարի. Եյ,
իմացիր ինչ անուն պէտք է տալ ինձ:

— Կերեցէք, մոռացել էի: Եւ ի՞նչպէս կարող էի
քո որդին լինել. քո որդիքդ քեզ պէս ոսկու պար-
կեր կլինին: Բարսեղ Աթանագինեանը հաճոյաբար
ժպտաց իւր հարստութեան մասին այս յիշատա-
կութեան վերայ:

— Աիայն դու մինչև նոցա մեծանալը բոլոր ոս-
կին պատուհանից դուրս կ'թափիս և նոքա կմնան
դատարկ տոպրակներ:

— Գնա, քնիր, յիմար:

— Գնում եմ, գնում, ամենողորմած բարերար:

Միւս առաւտօտ ես վաղ վեր կացայ և գնացի
փոքրիկ կաղնի անտառը ծաղկիներ հաւաքելու: Մա-
ցառների ճիւղերը բաժանելով՝ ես տեսայ թագ կացած
թզուկին. նա նստած էր գետնին, ձեռքը ծնկին յե-
ցած և դլուխն ել դրած նորա վերայ: Արտասուքի
խոշոր կաթիները փայլում էին նորա աչքերում:
Նշուկ լսելով՝ նա վեր թռաւ և կամենում էր փախ-

չել բայց Ճանաւելով ինձ, իւր փոքրիկ ձեռքով ար-
տասուքը սրբեց և բարեեց ինձ: Նրեկուայ չար,
կոււասէր ու ծաղրածու դէմքը չունէր այլ ևս. այլ
գոցա փոխարէն նորա տգեղ և փոքրիկ կերպարանքը
խորին տիրութիւն էր արտայայտում:

— Ի՞նչ է, օրիորդ Աննա, երեկ զուք տեսաք, թէ
ինչպէս կարօտութիւնը թռչկոտում էր, ինչպէս էր
պար գալիս, ինչպէս էր երգում, այսօր էլ տեսաք, ինչ-
պէս կարօտութիւնը լաց է լինում:

Խեղձ թզուկին ինչ պէտք էր պատասխանել:
Ինձ մնում էր միայն սեղմել նորա փոքրիկ ձեռքը:

— Հայրս իրաւունք ունէր, որ լսել անգամ չէր
կամենում ինձ փողով մէկին ցոյց տարիւ, մայրս նոյն-
պէս իրաւունք ունէր, որ այնքան տանջառէմ էր իրան
աշխատանքով: Ասում էին, չենք հասմենում մեր որ-
դու արիւն արտասուքը խմել թէպէտ անմիջի՛ժ մար-
զիք էին, բայց հասկանում էին, թէ մարդ էն կ'զգայ,
երբ նորան նայում են ինչպէս ծովային գաղանի վե-
րայ: Ահա օրինակ երեկ օրիորդներ ամեն բանի վե-
րայ հրաւիրում էին ինձ, իսկ նորա պատմներիս էին
նայում, ինչպէս մի կատուի կամ խողի ձագի վերայ:
Աստուած իմ, այս ի՞նչ բան է, որ մարզիք մարդիք
չեն: Երբ տեսնում են իւրեանց եղբօրը, մի մարդու,
ամենալառն կարօտութեան մէջ՝ չեն օգնում, օգ-
նելու մաքով: Պատուհանից իննդրող սովատանջ աղ-
քատի մի կոպէկ են ձգում, իսկ զուարծութեան
համար հարիւրներ են վատնում: Յըինակ, եթէ ես
խնդրեմ իմ ոսկու պարկից այն վեց հարիւր ռուբլին,
որ ինձ տուեց շորերիս հետ միասին, քաղաքից դուրս

մի փոքրիկ խանութ բանալու համար՝ չետալ իսկ եթէ մէկը ինձանից լաւը գայ նորա մօտ՝ հազար կ'յրուի: Խսկ մենք կարող էինք վաճառականութեամբ նորա պարտքերը հասուցանել:

Ես խօսք բաց արի թզուկի հետ: Զարմանում էի ես, որ նա երբեմն զրբից էր խօսում, երևում էր, որ զիլք շատ էր կարդացել:

—Պ. Պուրանինի փոքրիկ որդիքը մէկ ուսուցիչ ունեին, նա ինձ էլ սովորցրեց, լաւ մարդ էր ինքը և ասում էր, որ ես էլ ընդունակ եմ և կարող էի մարդ դառնալ եթէ ինձ փոքրուց սովորցնէին. բայց ես մարդ դառնալու համար չէի ստեղծած, ոյլ կատակի:

—Պուք կարդալ զրել զիտէք, զիտէք նշյնպէս և թուաբանութիւն, կարող էք մի տեղ գտնել ասցի ես:

—Ես այդ ինողրեցի Պ. Պուրանինից, իւր որպու տարուած յիսուն հազարը իրա՛ հետ գարձնելուց յիտոյ: Նա ծիծաղեց և ինձ ասաց, թէ քո հայրդ քեզ մօտ կդնեմ, որ տան բանալին չ'վերցնեն և փողերը չ'գողանան: Եւ ճիշտ էր ասում: Նա ինձ համար կամենում էր փող կտակել որով ես մտացիր էի առևտուր անել: Բայց նա յանկարծ մեռաւ, և կայքը մնաց փոքր ժառանգների համար, խսկ մեծերը պարագի տակ մնացին և այսպէս ես ծաղրածու դառայ: Մի ժամանակ ես էլ սովորում էր ուսուցչ մօտ, կարդում էի Լամանօսովի կեանքից, մոտածում էր ինձ ու ինձ. — սովորիր, գու էլ մարդ կ'գառնաս, բայց ինձպէսներին մարդ դառնալու համար

հարկաւոր է, կամանօսով ծնուիլ: Բայց ինչ նման ե՞մ կամանօսովին: Խս լսեցի, երբ բժիշկը մի անգամ ուսուցչի հետ վիճում էր, որ թզուկը ոչ թէ կամանօսովի, այլ փոքր նշանաւոր ընդունակութիւններ էլ չետալ սւնենալ: Առաջ ես չի կամենում հաւատալ իսկ յետոյ երբ սկսեցի կարդալ ուրիշ զբքեր, տեսայ, որ ոչինչ չեմ հասկանում. իսկ ուսուցիչն ասաց, որ իմ հասկանալու ժամանակս էր: Նաս զժուար էր: Եւ ես սկսեցի աւելի վէպեր ու բանաստեղծութիւններ կարդալ իսկ յետոյ այդ էլ թողեցի. կարդալուց յետոյ մի տեսակ թափածութիւն է, զալս մարդու վրայ: Ի՞նչ հարկաւոր է, ծաղրածուին կարդալ:

—Մի վհատիր, Բարսեղ Միմէօնեան, ասացի ես, գուք կ'գտնէք և այնպիսի մորդիկ, որոնք կարող են նայել ձեզ վերայ, ինչպէս մարդու վրայ: Եւ ես ցցի տուի նորան մի քանի լաւ ընտանիքներ, որոնց ծանօթ էի ես Օրէնբուրգում:

—Բայց գուք կարծում էք թէ իմ բարերարս ինձ թողլ կտայ, ես երեկ երեկոյ նորան ինովեցի ինձ արձակել և թզուկը հեկեկաց փոքր ինչ բայց յետոյ զգաստացաւ և շարունակեց. — ինդրեցի նորանից շուտ շուտ թողնել այստեղ գալու, գուք ինձ հետ մարդու պէս վարուեցաք: Նա այսպէս պատասխանեց. — քեզ եթէ շուտ շուտ թողնեմ մարդիկերանց մէջ, յիմար, վաս կ'սովորեն, անօգուտ կ'լինի. Նա խիստ կատաղութեամբ ծաղրեց Բարսեղ աթանագինեանին. ոչ, ինձ վիճակուած է ծաղրածուլինել: Ոչ, եթէ ես պակտաւոր չ'ինչէի, մօրս կ'պահէի, քոյրերիս զրութիւնը կ'բարւոքէի, մէնք բաղ-

տաւոր, ուրախ և լաւ կեանք կվարէինք, ես կ'հանգըստացնէի պառաւ մօրս, որ դեգերում էր մեզ համար: Իսկ հիմայ ես ի՞նչ բանի պէտք եմ այս նապաստակի թաթիկներով, և այս ասելով նա մի տիսուր ու չար հայեացք ձգեց իւր փոքրիկ ձեռքերի վերայ:

ԳԻՆՆԵ / կ ԿՈՊԵԿ

Ծախվումէ Տիկիիսի բալոր հայ գրավաճառների մօտ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0339542

